# Ժառանգություն եւ մարտահրավերներ

## Օտարերկրյա գիտականները ծանոթանում են Հայաստանի եւ Արցախի պատմամշակութային արժեքներին

Հունիսի 25-ին մեկնարկել է «Հայկական լեռնաշխարհի պատմամշակութային ժառանգություն» թեմայով միջազգային գիտաժողովը:

*«Վերնագիրը չափազանց ընդգրկուն է, որը ներառում է աշխատանքներ՝ պատմություն եւ բանասիրություն, հնագիտություն եւ ազգագրություն, արվեստ եւ ճարտարապետություն»*,–«Արմենպրեսի» հաղորդմամբ՝ ասել է ՀՀ ԳԱԱ նախագահ **Ռադիկ Մարտիրոսյանը**:

Նրա խոսքով՝այս գիտաժողովի հիմնական նպատակն է ավելի ընդգրկուն ներկայացնել հայկական լեռնաշխարհի պատմամշակութային ժառանգության դերը տարածաշրջանի պատմական գործընթացների ձեւավորման եւ զարգացման համակարգում:

*«Այս կերպ մենք ցանկանում ենք նպաստել պատմագիտության, հայագիտության տարբեր ոլորտների մասնագետների գիտական եւ գործնական կապերի հետագա ընդլայնմանը, մշակել արդի մարտահրավերներին համապատասխան գիտականորեն հիմնավորված մոտեցումներ գործողությունների միասնական պլանի եւ ռազմավարական ծրագրերի նախապատրաստման համար»*,–ասել է ԳԱԱ նախագահը:




ՀՀ մշակույթի նախարար **Հասմիկ Պողոսյանի** կարծիքով, գիտաժողովը խորհրդանշում է Հայկական լեռնաշխարհի բազմադարյա ժառանգությունը պահպանելու, ուսումնասիրելու, վերականգնելու, օգտագործելու եւ հանրահռչակելու կարեւոր առաքելությունը: Գիտաժողովին ուղերձ էր հղել ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը:

«Մշակութային ժառանգությունը հակամարտության համատեքստում», «Արցախի պատմամշակութային ժառանգությունը», «Հայ քանդակագործները Օսմանյան կայսրությունում» եւ այլ զեկուցումներով հանդես եկան ոչ միայն Հայաստանի եւ Արցախի, այլեւ օտարազգի գիտնականներ՝ Ռուսաստանից, Միացյալ Նահանգներից, Ֆրանսիայից, Մեծ Բրիտանիայից, Իտալիայից, Ուկրաինայից՝ շուրջ 12 գիտնական:

Գիտաժողովը Երեւանում կշարունակվի նաեւ 26-ին, իսկ հունիսի 28-29-ը աշխատանքները կտեղափոխվեն Ստեփանակերտ: Այն կեզրափակվի հունիսի 30-ին, որի շրջանակում օտարերկրացի հյուրերը կծանոթանան Հայաստանի եւ Արցախի մշակութային արժեքներ Գառնիին, Նորավանքին, Գեղարդին, Խոր Վիրապին, Շուշիին, Տիգրանակերտին: